

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՃԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարադպրագույնը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Медик»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն: Ղարաբաղի զարմանոցի
կալուածական խնդիրը: Նամակ խմբագրին: Ներ-
քին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Եղիպտոս-
կան հարցը: Նամակ Թիֆլիսէից: ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ: ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Արհեստագիտական խնդիրը
տարրական ուսումնարանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԿՈՐԱՆՈՑԻ ԿԱԼՈՒՄԱԿԱՆ
ԽՆԴԻՐ

Թիֆլիսի «Юридическое Обозрение»
(№ 40) իրաւագիտական լրագրի մէջ տրա-
ված է մի յօդուած «Миллионная Тяжба»
վերնագրով, որի նպատակն է ապացուցանել
թէ ինչպէս մի քանի դժուած հայ վարդա-
պետներ, որոնք պարսկական ասպատակու-
թեան պատճառով ամբացել էին դժուարա-
մատոյց լեռանց և հովիտների մէջ, կամայ
կամայ տարածում են իրենց իշխանութիւնը
անտէր ընկած արքունի հողերի վրա և ի
վերջոյ դատաստանական կերպով իրենց
ձեռքը ձգելով մի քանի միլիոնի կարողու-
թիւն, այժմ հնչում են իրենց երեսնամեայ
աշխատութեանց պտուղները: Արքունի շա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՀԵՏԱՍԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՏԱՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Մենք չունենք մարմններ, որոնք մեր ազգային
պահանջներին բաւականութիւն տալու ինքնիշխա-
նէր իրանց վրա վերցնէին. այժմ կայացել են Կ.
Պօլսում «Տնտեսական Միութիւն», Թիֆլիսում
«Բարեգործական Ընկերութիւն», որոնց նպատակը
լոկ ուսումնական չէ և որոնցից ամէն հայ սպա-
սում է թէ դրանք պէտք է կատարեն յիշեալ դերը.
Իսկ այդ յոյսերը այդ արդարացիաւ համար հար-
կաւոր են ժամանակ և մեծ գումար: Կա ապագա-
յի հարց է և ինչպէս մինչև հիմա, նոյնպէս և այ-
սուհեան դեռ բաւականի երկար ժամանակ մեր
ազգային գործերի առաջադիւթիւնը կախված
կը լինի անհաստեղի հասկացողութենից և եռան-
դից: Մինչև հիմա մեր ազգային գործերը շատ
դանդաղ քայլերով են ընթանալիս եղել. ապացոյց
ինչքան գեղեցիկ մտքեր և առաջադիւթիւններ
են երևացել մեր ամուլում, հայերը հասկացան
այն առաջադիւթեան նշանակութիւնը, որով
պէտք էր կազմել ընկերութիւն թիւրքաց Հայաս-
տանի հողերը գնելու և կտոր-կտոր հայերին վա-
ճաւելու համար. Թիֆլիսի հայերը հասկացան
մինչև այժմ թէ ինչո՞ւ Հայաստանի համար գործ-
վում է, պէտք է Հայաստանի հողի վրա լինի.
հայերը հասկացան և իրագործեցին այն միտքը՝ թէ
այս րօպէսի շատ ու քիչ ուսումով մարդիկ են
հարկաւոր Հայաստանում. որը մտաբերեց, որը
ասեց: Առաջադիւթիւնները բուն Հայաստանի
համար կայացաւ միայն «Տնտեսական Միութիւն»,
որ կարծես՝ բաւականացաւ իր կանոնադրութիւնը
հրատարակելով: Եւ բնականապէս, ուրիշ ոչինչ էլ
չէր կարող անել, քանի որ «ընկերութիւնը» կը
կանգնի Կ. Պօլսի և կը ձգի ձեռքերը Գործ-Արա-
յի խորքերում արտեր հնչելու:
Այս ամենի պատճառը նրանում է, որ ազգային

հերին այդպէս պաշտպան կանգնող այ. յո-
ղուածագիրը կարծում է որ խօթականը
բոլորովին ապօրէն և զուր տեղ այժմ տի-
րանում է մօտ 100 հազար դէսիատին հո-
ղի, որը առաջ իրը թէ պատկանում է եղել
արքունի գանձարանին: Եթէ այ. յօդուածա-
գիրը փոքր ինչ անաշուտութեամբ քննէր
գործը, եթէ նա մի փոքր ծանօթ լինէր հայ
վանքերի պատմութեան հետ, որ և պարտա-
ւոր էր անել, քանի որ նա կամեւում է ա-
նաշուտ կրիտիկով պաշտօն կատարել. նա
այն ժամանակ այլապէս կը գրէր: Ահա թէ
գործը ինչու՞ն է:

«Մշակ» ընթերցողներին յայտնի է Ղա-
րաբաղի հողերը զարդի կալուածական
խնդիրը: Այդ կալուածները, որոնք պատ-
կանում են զանազան վանքերի, այն է Ա-
մարասայ, Գանձասարայ և զլխաւորապէս Խօ-
թայ վանքերին և որոնց տարածութիւնը ի
սկզբան եղել է մօտ 300 հազար դէսիատին
գեղեցիկ վարեւահողերով, անտառներով, հան-
քերով և այլն, հանգուցեալ ժողովրդասէր
Մատթէոս կաթողիկոսը յատկացրել է Շու-
շու հողերը թեմական դպրանոցին և տուել
է հողաբաժնութեան մատակարարութեան
տակ: Խօթայ վանքը ունեցել է մօտ 200
հազար դէսիատին տեղ և դրա մեծ մասը
նա ժառանգել է դեռ հին պատմական ժա-
մանակներից: Թէ խօթայ վանքը տիրացել

գործերի վրա մտածելու, խօսելու ժամանակը
կուշտ ճաշից յետոյ ենք յարմար գտնում, չիկնով
ուռած փորը և հիմալով ինչպէս կոյրացած է
նա, նրանում է, որ հայերը ոտից մինչև գլուխ
խրված են իրենց անձնական շահերում, որ մատ-
ներով կարելի է հաշուել այն հայերին, որոնք աղ-
զին ծառայելը, օգնելը իրենց պարտք են համա-
րում և ոչ բարեբարութիւն, մէկ խօսքով չունե-
նալով ազգի պահանջները կատարող օրգաններ,
չունենք և ազգային գործիչներ:

Մեր մամուլում բարձրացաւ տնտեսական հարցը
և այդ հարցի նշանակութիւնը այնքան մեծ է, որ
փափագել է տեսնել նրա գործնական հետեւիքը.
և որովհետեւ արհեստագիտական հարցը տնտեսա-
կանի մի ձիւղն է, վանքերոյ տնտեսական հարցի
մշակելու համար մինք թարգմանեցինք հետագայ
ընթերցողներ, որ տ. Գօրբունովա կարգաց Մօսկ-
վայի դատաւարական ուսուցչական ժողովում և որը
տպվել «ՅԵՄԵՏՈՒՆ» շաբաթաթերթում: Այս ընթեր-
ցողը բացի մի քանի ընդհանուր դատողութիւն-
ներից նաև նրանով է հետաքրքրական, որ նա
պարունակում է իր մէջ արհեստագիտական հար-
ցի պատմութիւնը և դրանով նա ցոյց է տալի թէ
ինչպէս է առաջ գնացել այդ գործը ուրիշ երկրնե-
րում: Այժմ դիմելով թարգմանութեանը, կրկնում
ենք, որ մեր ազգային գործերի առաջադիւթիւնը
կախված է անհաստեղի հասկացողութենից և է-
ներդիւթից:

Ամեն ուսումնարանական հարցով հետաքրքրվողը
և պարտաւոր լաւ գիտէ թէ ինչ նշանակութիւն
ունի արհեստագիտական հարցը ուսումնարանում.
Ճամանակի սղութիւնը և մեր նպատակը թոյլ
չեն տալիս մեզ հետազօտել թէ՛ ինչպիսի տնտե-
սական և հասարակական պայմաններ են օրից օր
առաջ տանում այդ հարցը, ինչ վէճեր են միշտ
բարձրացնում արհեստագիտական ուղղութեան
կողմնակիցները, նայելով զանազան տեսակետնե-
րից:

Այս գեղեցիկ մէջ մենք միայն մի հարցի
վրա պիտի խօսենք, այն է—տարրական ուսում-
նարանում արհեստների դասաւորութեան մասին.
բայց հարկաւոր ենք համարում աւելացնել, որ
արհեստ բառը չէ բացատրում այն, ինչ որ կամե-

է այդ կալուածներին դեռ 300 տարի առ-
ջանից առաջ, թէ նրան այդ կալուածները
ընծայել են զանազան հայ բարեպաշտ իշ-
խաններ, մինչև անգամ պարսիկ շահերը, դո-
րա ամենալաւ և կենդանի ապացոյցը վան-
քի պատերի վրա գտնված արձանագրու-
թիւններն են և ժողովրդի վկայութիւնը,
ինչպէս և այն հին զանազան տնտեսագոր-
ծական շինութիւնները, որոնք այսօր թէև
աւերակ, բայց ցոյց են տալիս թէ այդ
վանքը մի ժամանակ և ուռն գործունէութիւն
է ունեցել և արդիւնագործութեան կենտրոն
է եղել: Ուրեմն քանի որ խօթայ վանքը ու-
նեցել է այդ կալուածները դեռ 300 տա-
րի արանից առաջ, նրանք որ և իցէ կերպով
չէին կարող ուռնաց արքունի գանձարանին
պատկանել, բայց որում ուռնաց տիրապետու-
թիւնը միայն մօտ ժամանակի ծնունդ է:
Սակայն պատմական շփոթ և աղմկալից ժա-
մանակներում վանքի ձեռքից այդ կալուած-
ները խել են զանազան բռնակալներ, վանքը
ամայացել է և անկարող է եղել դիմանալ
աւերման և յափշտակութեան հասանքին,
այնպէս որ զանազան թուրք բէկեր և խա-
լուածներին: Սակայն հանգուցեալ երախ-
տաշատ Բաղդասար միտրապօլիտը վանքի իրա-
ւունքների պաշտպան կանգնելով, յաջողել է
զարձեալ այդ կալուածները ձեռք ձգել:

Նում ենք ասել այս դէպքում: Եւ արդարեւ ինչպէս
կարելի է 7—12 տարեկան մանուկներին սովոր-
եցնել արհեստներ, չը կայ գերմանացոյ «Hand-
fähigkeits—unterricht»-ը, որ նշանակում է սո-
վորեցնել այնպիսի առարկաներ, որոնք զարգաց-
նում են ձեռքերի ճարակութիւնը: Առանց ընդ-
հանուր դատողութիւնների մինք կաշխատենք ներ-
կայացնել թէ՛ ինչպէս է ծագել արհեստագիտական
հարցը և ինչպիսի միջոցներով և ինչ օգտակա
հետեւանքի են հասնել:

Արհեստագիտական ուսումը տարրական ուսում-
նարանի մտցնելու գլխաւոր պաշտպանը կօպնե-
հանքից Կլաւսում—Կաւան է. զանազան պայ-
մաններից զրկված Կլաւսում—Կաւանը դեռ ման-
կութեան հասակում սովորել էր ազատ ժամերը
անցկացնել զրադիւթով զանազան գործերով, երբ
ազատ օրում, օր. ձմեռը, անձրեւային օրերը խա-
ղալ անկարելի էր լինում: Եւստոյ հարկաւորված
էր ինքը ուսուցանել իր երեխաներին և գործի ա-
ւելի աշխուրթեան համար նրանց մանակից էր
անում մի քանի այլ երեխաներ: Այստեղ նա վրձ-
նեց զրադիւթի նրանց զանազան մանր մօտի ձե-
ռագործներով. շաբաթական միայն 2—3 ժամ
խելով նրանց խաղից, նա այն օտօրիմանի հասց-
րեց երեխաներին, որ նրանք համաձայն իրենց
ընդունակութիւններին, ձգտումներին, կարողանում
էին ազատ և առանց օգնութեան զանազան ա-
ռարկաներ պատրաստել: Այդ աշխուրթի փորձը զըր-
դեց Կ. Կլին թողնել զինտրական ծառայութիւնը
և բերանացի ու գրով տարածել հասարակութեան
մէջ արհեստագիտական տարրական ուսումնա-
րանը մտցնելու օգուտը:

Սկանդինավական թերակղզու տեղական կլիմայա-
կան պայմանները, ասում է Կ. Կլ-ը, արդեւում են
զիւղացուն մի բանով պարապել տարրայ շատ
ամիսներ: Պարագութեան անցկացրած ժամանա-
կը վատ աղբեղութիւն ունի զիւղացու վաղի ու
բարբի վրա. իսկ զանազան արհեստներից տեղե-
կութիւն ունենալով, նա միջոց ունի նախ զուար-
ձութիւն, ապա օգուտ ստանալու և ապա շատ ու
քիչ փող հաւաքելու: Եթէ տարրական ուսումնա-
րանում երեխաներին այնպէս սովորացնեն ար-
հեստներ, ինչպէս հարկն է, նոքա կունենան ոչ

կեր կալուածները Մատթէոս կաթողիկոսի
կարգադրութեամբ անցնում են Ղարաբա-
ղի զարմանոցի հողաբաժնութեան ձեռքը,
այս վերջինը բաղկացած լինելով առհա-
սարակ անպիտան և անհասկացող անձե-
րից, իր աններելի անհոգութեամբ թոյլ է
տալիս որ սկսեալ 50-կան թուականից դա-
նազան մասնաւոր անձինք քիչ քիչ յափշտա-
կեն, այնպէս որ երկրագիտութեան ժամա-
նակ յանկարծ 150 հազար դէսիատին հո-
ղի վրա զանազան մարդիկ վէճ են յայտ-
նում: Վէճ է յայտնում և գանձարանը:

Վերջապէս այդ հոշակաւոր 3 միլիոն
արժողութիւն ունեցող ահագին գործի
դատը ենթարկվում է գանձակի նահանգա-
կան դատարանին ի քննութիւն: Գործը ըս-
կավում է հոկտեմբերի 21-ին անցեալ Գա-
րախ. Գոսյա. Իմպւեստը) գործ էր զրել
ի վնաս վանքին, չը վերադարձնելով արան
այն դօկումենտները, որոնք անհրաժեշտի կեր-
պով ապացուցանում են վանքի իրաւունքը
և որոնք ձեռք էր բերել վարչութիւնը, բայց
զարձեալ փաստերը այնքան ակնեղ են, որ
որ նահանգական դատարանը վէճի տակ
ձգած 130 հազար դէսիատինից 100 հա-
զարը վճռեց յօգուտ վանքի: Մնացեալ 30

միայն տարրական գիտութիւններ մի քանի ար-
հեստների վերաբերեալ, այլ և թեթիւ միջոց հար-
կաւոր ժամանակը, եթէ կեանքի հանգամանքները
հարկաւորեն, մէկ պարագայում միայն դիմելու:
Իսկ ուսումնարանը, զարգացնելով երեխայի սիր-
տը, միտքը և յիշողութիւնը, ոչ մի միջոց չէ տա-
լիս ձեռքին վարժվելու—զարգանալու, այսինքն
զարգանալուց զրկված է այն միակ և զարմանալի
գործիքը, որ կերակրում է մարդկութեան ամենա-
մեծ մասը: Եթէ ուսուցիչները և ծնողները կար-
գանային առաջուց որոշել, թէ ինչի է աւելի ընդու-
նակ երեխան՝ ձեռագործի թէ մտաւոր գործի, այն
ժամանակ հարցը ուրիշ վիճի կը ստանար: Շատ
անգամ ենք պատահում ամենօրեայ կեանքում,
ինչպէս են զանգառվում թէ՛ սխալվել են իրենց
պարագայում, մասնագիտութեան ընտրողութեան
մէջ: Շատ անգամ տաղանդը, հանձարը մնում է
ծածկված, անզարգացած, որովհետեւ միջոց չէ եղել
նրանց երեւոյն, արտայայտվելու: Վանքերոյ
ազգային ուսումնարանը այն ժամանակ միայն
կարող է իր կոչմանը և նշանակութեանը համապա-
տասխան լինել, երբ կարող կը լինի տալ երե-
խային միջոց գնահատելու այն, ինչ որ նրան
պատրաստում է կեանքի համար, կամ երբ կը
տայ երեխային պարապել այն ամենով, ինչ որ
կարող է նրա ձգտումները, կոչումը որոշել: Վանք-
երոյ, վերջապէս է Կ. Կ. ազգային լաւ կադմա-
կերպված ուսումնարանում պէտք է միացած լինի
արհեստագործութիւնը գրագիտութեան հետ:

Այս պրօպօզանդայի հետեւանքը այն եղաւ, որ
1873 թ. վանքայում կազմվեցաւ մէկ ընկերու-
թիւն—«Տնային արհեստների ծառայման ընկերու-
թիւն» անունով. սրա նպատակն էր բարձրացնել,
կեանք տալ տեղական մանր ընկերութիւններին—
Verein-ներին, դրաւելով, քաշելով դէպի այն ըն-
կերութիւնները ընդունակ ուսուցիչներ և ուսուց-
չուհիներ, մատակարարելով նրանց հում նիւթեր,
գործիքներ, լաւ օրինակներ, ձեռնարկներ և նկար-
ներ, օգնելով նրանց պատրաստված առարկաները
ծախելու, խնամակալ լինելով տեղական բոլոր
փոքր հանդէսներին, հարկաւոր դէպքերում կազմե-
լով մեծ հանդէսներ, օգնելով խրախուսելով գոր-
ծով այդ ասպարիդի եռանդուն գործիչներին և

Վարդգիս—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԷՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՁԵՒ ԶԱՏԻԿ զլիարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրեկներ 4 ր., բիշակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, արիֆ, սրբիչներ և այլոսներ կէս հուդ, արիֆ, սրբիչներ և այլոսներ կէս հուդ: Հնդկական բրինձ 6 կ., սագո և պերլովայա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70 կ., նշտայ կոլմանի 18 կ. ֆուստը, լուծողական ձեթի պիլիւններ 2 կ., լուացքի փոշի 5 կ.: **ՆՈՐՈՒԹԻՒՆ:** Մեղրամամ և արծաթէ մամեր 35 և 42 կ. ֆուստը: Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահաճակախներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 րուրուց: **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:** 7—36

«ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇ-ԻՍՊԱՀՈՒԹԻՒՆ» ԲՈՒԻԳԱԼՏԵՐԻՍՅՈՒՆ

Ամենամեծ և գործնական ձեռք, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշաւագրութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մանր մամուլի տակ դիւրը կը բաղկանայ մօտ 400 երեսից և մաքուր տպագրութեամբ. դրա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիզաստնութիւն «Գող» վերնագրով և «Իմ երգերը» յաւելուածով. ցանկացողները թիֆլիսում կարող են գրուել «Կենտրոնական» և «Զաքարիայ Գրիգորեանցի» գրափաճառանոցներում և թաղէտ Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բաւիյի մագաղիմում, ինչ մօտ և «Մարդ ընկ» գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.: Բաժանորդներին անունները և ազգանունները կը տպագրուեն զրբի վերջում:

Հրատարակիչ Աբէլ Գ. Ապրեսեանց

ԾԱՌՎՈՒՄ ԵՆ 25% ԷժԱՆ քան թէ ուրիշ տեղ. Թէթ, կակաօ, ՇՈՎՈԼԱԿ, բիսկիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, թէյ, յամաններ, սուզօններ, ՄԱՏՈՒՅԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԻՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիաներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼԱՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄԲԵՐ, ամաններ, ութ ծեփեր, ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐ, երեսբիւններ, թաշկինակներ, կանոնայ գուրաններ, մարդկերանց գուրաններ, տուպիտի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մաքնիկա, խիւսի գինի, պօրաւէյն, խորեա, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:** ՆՈՅՆ ՏԵՂԸ փաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախում է **ԹԷՅ:** պուդրով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆուստերով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆուստը 2 ր. քաշը ԱՌԱՆՅ ԹԷՐԻ: **ՀՐԱՑԱՆՆԵՐ** 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բեֆոլկերներ 4—34 ր., ԲՈՒԼԳՈՎ (bull dog) 11—20 ր., կանոնայ թաւ. բեր 65 ր., շեֆիլդի գանակներ 3 ր. 50 կ. գիւժիկը, այլոսներ կիսապիւղ, ֆիլտրաւներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և ռեֆոլկերների թիֆլիսում: 88—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»

Д. Григорія АРЦУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

«ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»

Այս ֆիլմայով բանալով երևանում են գրափաճառանոցի կցերով նորա հետ ուսումնական, դիւանական, նկարչական և կազմարարական իրեղէնների խանութ, յանձն եւ առնում ապ միշտ յիշեալ ապրանքներից եւանդի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի գիւնաստներին և ուսումնարաններին շատ ձեռնառու գնելով և պայմաններով:

Ընդունում եմ տպագրել տալու բլանկներ, ծանուցադրեր, յայտարարութիւններ, այցկատմաներ, բրօշուրներ, նաև զրբեր, ամենատարժան վարձով:

Ինչ մօտ է գտանվում իմ հրատարակած «Տալին բժշկական մարմնամարզութեան» զրբիկի պահեստը:

Իմ հասցէն. Դ. Երևան. Մ. Սիմեոնյանց, магазинъ. «Другъ-Дѣтей».

ԱՐԴԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող ՎՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКИ» մահ կա կան զրբուկի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս զրբուկը ընդունել էր տպագրելու ՀԱՅ ԵՐԵՆ ԶՐԲԵՐԻ ՀՐԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու: Տպագրված է ՀԱՄ ԸՆԴՈՒՐ ԹՂԹԻ ՎԵՐԱՅԻՆՈՒՄԱՐԵՐՈՎ:

ԳԻՆԵ Է 20 ԿՈՊԵԿ

Կարելի է ստանալ թէ՛ կենսարանական գրափաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հեռեկալ հասցեով:

Թիֆլիս—на Авлабартъ Ивану Петровичу Назарянцу.

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 երրորդ տեսակի 15 կ. հատը, 10,000 րօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կոպպէքներ 15 կ. հատը, 10,000 սակից 8—40 կ. հատը, 10,000 պիւնիկներ 5 կ., 5,000 շիշ պօրաւէյն և խիւսի 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 գիւժիկ մատիտներ և զրշակիներ 8 կ. գիւժիկը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆուստը, 1000 ֆուստ լէպէօշկա 50 կ. ֆուստը, 600 անգլիական բէվօլփերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբօմներ, ձմեռայ պալաճներ, գլխարկներ, վարսիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ: Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.: 44—60

Կովկասեան դպրոցաց հոգաբարձուներէն շատերը մեր հրատարակութիւններն ուղարկեցին ձեռք բերելու համար միշտ մեզի Ռոստով (Գօնի վերայ) քաղաքը դիմելով և ճանապարհի համար աւելի ծախք վճարելով, նոյա դիւրութեան համար հարկաւոր համարեցին յայտնել, որ այն զրբերը կարող են ստանալ նաև մեր եղբորից, որոյ հասցէն է. *Тифлисѣ, Григорію Абрамовичу Теръ-Абрамянъ, Ольгинская улица, д. № 3.*

Իսկ նորա մօտ գտնուած զրբերը սղաւ են.	ր.	կ.
ԱՅՐԲԵՆԱՐԱՆ ՆՈՐ, 75 վիմատիպ պատկերներով	—	15
ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ուսու լեզուի	—	50
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ հայերէն, ուսուներէն և ֆրանսերէն.	—	50
ԸՆԹԵՐՅԱՐԱՆ բարոյական ուսմանց, ազգային գիտելիաց և զուարճալի պատմութեանց	1	—
ԸՆՏԻՐ ԱՌԱԿՆԵՐ եղովպոսի և ֆուլովի հանդերձ բարոյական խորհրդածութեամբ, 20 վիմատիպ պատկերներով	—	60
ԺԱՍ, կատակերգութիւն 3 արարվածով	—	30
ՀԵԳԵՐԱՆ, որ է «կանոն սարճոս»	—	5
ՅՈՎԱԿԻ Գ, կենսագրութիւն հանդերձ պատկերաւ.	—	25
ՆԵՐՍԷՍ Ե, կենսագրութիւն հանդերձ պատկերաւ.	—	25
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ (սակաւագրուած).	1	—
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, երրորդ տիպ, 24 վիմատիպ պատկերներով.	1	—

Բազմաթիւ օրինակներ գնովնեւուն նոյն գիշումը կը լինի, ինչ որ տպուած է մի 1882 թուականի օրացուցին մէջ:

Տէր տպարանի և վիմագրատան ՅՈՎ. ՏԵՐ-ԱՐԲԵՆԱՐԱՆ. (հ. շ.) 7—8

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԲԷԼ (աթուներ և բազկաթուներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարելից փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼԱՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրից կարող են դիմել այս հասցեով. Թիֆլիս, Михаилу Н. Теръ-Никогосову.

133—150

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ «ДОНСКАЯ ПЧЕЛА»
ГОДЪ СЕДЬМОЙ. на 1882 годъ

Съ 1-го января 1882 года «Донская Пчела» будетъ издаваться по той-же программѣ какъ издавалась въ предыдущіе шесть лѣтъ, два раза въ недѣлю. Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы находить, что «Донская Пчела» уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всѣякія рекламы положительно излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ:	
Съ доставкою въ Ростовѣ н/Д.	Съ пересылкою иногороднимъ
На годъ 6 руб.	На годъ 7 руб.
> 1/2 года 3 „ 50 к.	> 1/2 года 4 „
> 3 мѣсяца 2 „	> 3 мѣсяца 2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абрамянъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію «Донской Пчелы» въ Ростовѣ на-Дону.

Редакція покорнѣйше просить гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адреса четко разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, «ДОНСКІЙ-АЗОВСКІЙ русско-армянскій календарь на 1882-й годъ».

Редакторъ-издатель И. А. Теръ-Абрамянъ 4—5

ԲԱՆ-ՄԱՍԿԱՐԱԻ թիֆլիսի արհեստավորների ժողովարանում նշանակված է յունվարի 29-ին, ուրբալ յոգում «Հայոց բարեգործական ընկերութեան»:

Ցանկացողները ժողովարան մտնելու համար վճարում են. ժողովարանի անդամներ 1 րուբ, հիւրերը-մարդիկ 2 րուբ., մասկաները և տիկնայքը ամեն մէկը 50 կոպ. մասկաները պարտաւորական չեն ժողովարանի անդամաց գերդաստաններին. բայց սիրելի է 9 ժամ երեկոյեան, վերջը 3 ժամ գիշերուայ: Մասկաները վեր չեն առնվում մինչև երեկոյի վերջը: Հազուադէպ ձեռքը պարտաւորական են զինուորականների համար պագօններ, բայց շատատուց ու քաղաքականների համար կամ տեղական կամ տուկային խաակ հագուստ:

2—2